Թեստ տարրական աստիճանի ուսուցիչների համար

Մաթեմատիկա

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ մասնագիտական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է՝ 53

Թեստում ներկայացված առաջադրանքները, ձևաչափի տեսակետից տարատեսակ են: Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք կամ գրեք պատասխանը:

Ի նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ կնշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր ձեռք չեք բերի:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:

Առարկայական գիտելիք

(1) **1.** Մի հատ լուցկու հատիկի երկարությունը 4-4,5 սմ է: Թվարկածներից որի՞ն կարող է հավասար լինել այն բեկյալի երկարությունը, որը բաղկացած է 3 միլիոն այնպիսի հատվածներից, որոնցից ամեն մեկի երկարությունը հավասար է լուցկու հատիկի երկարությանը:

ա) 118 կմ-ի,

բ) 127 կմ-ի,

գ) 136 կմ-ի,

դ) 145 կմ-ի:

(1) **2.** Հավասար բաժանմունքներ ունեցող առանցքի վրա նշված A, B և C կետերից $A-$ի և B- ի կոորդինատները ցույց են տրված գծագրի վրա: Ինչի՞ է հավասար C կետի կոորդինատը:



ա) $\frac{2a+b}{3}$

բ) $\frac{a+2b}{3}$

գ) $\frac{b-a}{3}$

դ) $\frac{b+a}{3}$

(1) **3.** Թվարկածներից ո՞ր նախադասությունն է արդարացված ցանկացած այնպիսի եռանկյան համար, որի երեք գագաթները գտնվում են տրված շրջանագծի վրա:

Տրված շրջանագծի տրամագծից փոքր է.

ա) եռանկան միայն որևէ մի կողմը,

բ) եռանկյան որևէ երկու կողմը,

գ) եռանկյան երեք կողմը,

դ) եռանկյան ոչ մի կողմը չէ:

(1) **4.** x, y, z և t միմյանցից տարբեր այնպիսի բնական թվեր են, որ $x = \frac{z}{y}$ և $t = \frac{x}{2}$: Այս թվերից ո՞րն է առանց մնացորդի բաժանվում մնացած երեքի վրա:

ա) x

բ) y

գ) z

դ) t

(1) **5.** Շրջանային դիագրամի վրա տրված է քաղաքներից մեկի բնակչության բաշխումը՝ ըստ ազգության: Քաղաքում ազգությամբ հույն բնակչության թվաքանակը հավասար է 72 հազարի, իսկ ազգությամբ թուրք բնակչության թվաքանակը 1,5-անգամ ավելի է ազգությամբ հույն բնակչության թվաքանակից: Ընդամենը քանի՞ բնակիչ է քաղաքում:



ա) 360 հազար,

բ) 400 հազար,

գ) 480 հազար,

դ) 600 հազար:

(1) **6.** Բնական թվերի հաջորդականության մասին հայտնի է, որ.

- եթե հաջորդականության որևէ անդամը 12-ի բազմապատիկն է, ապա նրա հաջորդ անդամը նույնպես 12-ի բազմապատիկն է:
- Հաջորդականության առաջին 10 անդամից միայն 4 անդամն է 12-ի բազմապատիկ:

Ստորև թվարկածներից ո՞րն է **անհնար .**

ա) այս հաջորդականության ութերորդ անդամը 18-ի բազմապատիկն է,

բ) այս հաջորդականության իներորդ անդամը 18-ի բազմապատիկն է,

գ) այս հաջորդականության երրորդ անդամը 12-ի բազմապատիկը չէ,

դ) այս հաջորդականության յոթերորդ անդամը 12-ի բազմապատիկը չէ:

(1) **7.** Դասարանում, որտեղ սովորում է Էլենեն, բոլոր աշակերտները տարբեր հասակ (բոյ, բարձրություն) ունեն: Այս դասարանի 15 ամենացածրահասակ աշակերտներից Էլենեից բարձրահասակ է միայն 3 աշակերտ, իսկ 10 ամենաբարձրահասակ աշակերտներից Էլենեից ցածրահասակ է միայն 1 աշակերտ: Ընդամենը քանի՞ աշակերտ է Էլենեի դասարանում:

ա) 20

բ) 22

գ) 24

դ) 26

(1) **8.** Զուգահեռագծի անկյուններից մեկի մեծությունը 89° է: Թվարկածներից որի՞ն **չի կարող** հավասար լինել այս զուգահեռագծի որևէ երեք անկյունների մեծությունների գումարի և որևէ երկու անկյունների մեծությունների գումարի տարբերության արժեքը:

ա) 85°-ի,

բ) 87°-ի,

գ) 89°-ի,

դ) 91°-ի:

(1) **9.** Թեդո պապը առաջին օրը հերկեց իր հողակտորի մեկ երրորդ մասը: Հողակտորի **մնացած** մասի որ երորդական մասը պետք է հերկի Թեդո պապը երկրորդ օրը, որպեսզի այս երկու օրվա աշխատանքի արդյունքում հերկած լինի հողակտորի կեսը:

ա) վեցերորդ,
բ) հինգերորդ,
գ)քառորդ,
դ) երրորդ:

(1) **10.** Հեռավորությունը Վենետիկից մինչև Հռոմ երկաթուղային ճանապարհով 522 կմ է: Հռոմից Վենետիկի ուղղությամբ 14:30-ին դուրս եկավ բեռնատար գնացք, որն ընթանում է 60 կմ/ժ հաստատուն արագությամբ: 6 ժամից հետո նրան հանդիպեց հանդիպակաց ուղղությամբ հաստատուն արագությամբ դիմացից եկող ուղևորական գնացք, որը Վենետիկից դուրս էր եկել 18:15 ժամին: Որքանո՞վ ավելի է ուղևորական գնացքի արագությունը բեռնատար գնացքի արագությունից:

ա) 10 կմ/ժ-ով,

բ) 12 կմ/ժ-ով,

գ) 14 կմ/ժ-ով,

դ) 16 կմ/ժ-ով:

Տվյալների վերլուծում

Օգոստոսին պահածոյի գործարանը տարբեր մրգեր տարբեր գնով էր ընդունում: Դիագրամի վրա կորերով սահմանազատված են այն տիրույթները, որոնք ցույց են տալիս, թե պահածոյի գործարանը ո՞ր միրգն էր ընդունում օգոստոսին և հանձնելիս՝ ի՞նչ սահմաններում էր տատանվում մեկ կիլոգրամ մրգի գինը օրվա ընթացքում: Օրինակ, դիագրամից երևում է, որ օգոստոսի 14-ին հանձնած տանձի գինը տատանվում էր 1,2-1,5 լարի սահմաններում:



Հաջորդ երկու հարցին պատասխանեք այս դիագրամի համաձայն:

Անցում հարցերին. 11 12

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **11.** Օգոստոսին ընդհանուր առմամբ քանի՞ այնպիսի օր էր, որի ընթացքում պահածոյի գործարանը երեք տարբեր տեսակի միրգ ընդունեց:

ա) 1

բ) 3

գ) 5

դ) 7

Տեսնել դիագրամը

(1) **12.** Ֆերմերը օգոստոս ամսվա օրերից մեկում պահածոյի գործարանին հանձնեց 200 կգ խնձոր և 200 կգ տանձ, որի համար նրան գործարանը վճարեց ընդամենը 560 լարի: Ո՞ր օրն է ֆերմերը հանձնել միրգը:

ա) օգոստոսի 8 -ին,

բ) օգոստոսի 9-ին,

գ) օգոստոսի 10-ին,

դ) օգոստոսի 11-ին:

Տեսնել դիագրամը

(1) **13.** Ուղղանկյուն կոորդինատային հարթության վրա տրված ABC հավասարասրուն եռանկյան AC հիմքը y-առանցքին զուգահեռ է: A գագաթի կոորդինատներն են $(-2;\ 1)$, իսկ B գագաթինը՝ $(4;\ 3)$: Ինչի՞ է հավասար այս եռանկյան հիմքի համապատասխան բարձրության հարաբերությունը հիմքի երկարությանը:

ա) 1,5-ի,

բ) 2-ի,

գ) 2,5-ի,

դ) 3-ի:

(1) **14.** m և n այնպիսի բնական թվեր են, որ $\frac{n-1}{n} < \frac{m-1}{m}$: Ստորև թվարկած առնչություններից ո՞րն է **<u>անհնար:</u>**

ա) $m > n$

բ) $n = \frac{m}{3}$

գ) $m = 2n$

դ) $n > m$

(1) **15.** Հայտնի է, որ.

I. Աննան կհանգստանա լեռներում կամ ծովափին:

II. Եթե Աննան հանգստանա լեռներում, ապա նա կհանգստանա նաև ծովափին:

Ո՞ր եզրակացությունն է բխում այս պայմաններից:

ա) Աննան կհանգստանա ծովափին,

բ) Աննան կհանգստանա լեռներում,

գ) Աննան լեռներում չի հանգստանա,

դ) Աննան ծովափին չի հանգստանա:

(1) **16.** x, $2x$, y, $7\frac{7}{10}$ թվերը դասավորված են ըստ աճի: Տարբերությունը յուրաքանչյուր երկու հարևան թվերի միջև 2-ից փոքր է: Թվարկածներից որի՞ն կարող է հավասար լինել y:

ա) 5,5-ին,

բ) 5,7-ին,

գ) 5,8-ին,

դ) 6-ին:

(1) **17.** Ուղղանկյուն զուգահեռանիստը, որի հիմքի մակերեսը 20 սմ^2 է, իսկ կողմնային նիստերից մեկը՝ 12 սմ^2, բաժանված է հավասար խորանարդների, որոնց կողի երկարությունը հավասար է 2 սմ-ի: Քանի՞ խորանարդի է բաժանված տրված ուղղանկյուն զուգահեռանիստը:

ա) 12

բ) 15

գ) 18

դ) 20

(1) **18.** Եթե տրված եռանիշ թվի գրառման մեջ վերջին թվանշանը ջնջենք, ապա ստացած երկնիշ թիվը 715-ով փոքր կլինի տրված եռանիշ թվից: Ինչի՞ է հավասար տրված եռանիշ թվի թվանշանների գումարը:

ա) 16-ի,

բ) 18-ի,

գ) 20-ի,

դ) 22-ի:

(1) **19.** Դատարկ ամանը, որը գծագրի վրա տրված պատկերի ձևն ունի, ջրով են լցնում: Ամանի մեջ ժամանակի հավասար ինտերվալներով միևնույն քանակի ջուր է ներհոսում: Ստորև տրված դիագրամներից մեկի վրա ցույց է տրված, թե ինչպես է փոփոխվում այս ամանում ջրի h մակարդակը t ժամանակի համաձայն: Ո՞րն է այդ դիագրամը:





ա)



բ)



գ)



դ)

Տվյալների բավարարում

(1) **20.** x և y – ը թվեր են:

Տրված է երկու պայման.

I. $3x < 3y - 2$

II. $5x < 5y + 2$

Պարզելու համար, թե x և y թվերից ո՞րն է մեծ.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **21.** Տրված է երկու բուրգ և դրանց մասին երկու պայման.

I. Երկու բուրգի գագաթների քանակի գումարը հավասար է 24-ի:

II. Առաջին բուրգի նիստերի քանակը 4-ով ավելի է երկրորդ բուրգի նիստերի քանակից:

Պարզելու համար, թե որքանո՞վ ավելի է առաջին բուրգի կողերի քանակը երկրորդ բուրգի կողերի քանակից.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **22.** Գրքի առաջին, երկրորդ, երրորդ և շարունակաբար մյուս էջերը համարակալված են, համապատասխանաբար բնական թվերով. 1, 2, 3, ….

Տրված է երկու պայման.

I. գրքի բոլոր էջերը համարակալելու համար կիրառված թվանշանների ընդհանուր քանակը հավասար է 192-ի:

II. Գրքի վերջին երկու էջը համարակալելու համար անհրաժեշտ թվանշանների ընդհանուր քանակը հավասար է 5-ի:

Պարզելու համար, թե քանի էջանոց է գիրքը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **23.** Ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեցող ավազանի խորությունը հավասար է 2 մ 40 սմ-ի: Ավազանը ջրով կարելի է լցնել երկու խողովակով: Առաջին խողովակով ավազանում յուրաքանչյուր ժամում միևնույն քանակի ջուր է ներհոսում, երկրորդ խողովակով նույնպես ավազանում յուրաքանչյուր ժամում միևնույն քանակի ջուր է ներհոսում:

Տրված է երկու պայման.

I. միայն առաջին խողովակը մեկ ժամով բացելու դեպքում ավազանում ջրի մակարդակը 30 սմ-ով ավելի բարձր կլինի, քան միայն երկրորդ խողովակը նույն ժամանակով բացելու դեպքում:

II. Դատարկ ավազանում միայն առաջին խողովակը մեկ ժամով բացելու դեպքում ջրի մակարդակը 2-անգամ ավելի բարձր կլինի, քան միայն երկրորդ խողովակը նույն ժամանակով բացելու դեպքում:

Պարզելու համար, թե քանի՞ ժամ է անհրաժեշտ դատարկ ավազանը լցնելու համար երկու խողովակներն էլ բացելու դեպքում.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,
բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,
գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,
դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,
ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **24.** Աննան սեղանի վրա դարսած թերթերի որոշ մասը կտրատեց երեք մասի: Մնացածը՝ երկու մասի:

Տրված է երկու պայման.

I. Աննան թերթերը կտրատելու արդյունքում ստացավ ընդամենը 11 կտոր:

II. Աննայի կողմից երեք մասի կտրատած թերթերի քանակը կենտ է:

Պարզելու համար, թե Աննան քանի թերթ կտրատեց երկու մասի.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(3) **25.** A կետից դուրս եկած մոտոցիկլիստը որոշեց B կետ հասնել C կետի միջով: Եթե մոտոցիկլիստը հանգստանա, երբ նրան C կետ հասնելու համար կմնա 25 կմ, ապա նա անցած կլինի անցնելիքի ճանապարհի համեմատությամբ 2-անգամ պակաս հեռավորություն, իսկ եթե նա հանգստանա C կետը անցնելուց 25 կմ-ից հետո, ապա նրան անցնելու կմնա անցած ճանապարհի համեմատությամբ 3-անգամ պակաս հեռավորություն: Ընդամենը ի՞նչ հեռավորություն պետք է անցնի մոտոցիկլիստը B կետ հասնելու համար:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **26.** Հավասար վանդակներ ունեցող ցանցի վրա, որի ամեն մի վանդակը քառակուսի է, տրված են ABC եռանկյուն և $ACDE$ քառանկյուն, որոնց գագաթները համընկնում են ցանցի հանգույցներին (տես՝ գծագիրը): Քանի՞ անգամ ավելի է $ACDE$ քառանկյան մակերեսը ABC եռանկյան մակերեսից:



Պատասխանը հիմնավորեք:

(3) **27.** Ընտանիքը բաղկացած է հորից-մորից և մի քանի զավակներից: Ընտանիքի անդամների միջին տարիքը 18 տարի է: Առանց հոր, ընտանիքի մնացասծ անդամների միջին տարիքը 14 տարի է, իսկ առանց մոր՝ 15 տարի: Քանի՞ տարեկան է մայրը, եթե հայրը 38 տարեկան է:

Պատասխանը հիմնավորեք:

(3) **28.** Երեկոյան ժամը 20-ին սենյակում վառեցին երկու հավասար երկարության, բայց տարբեր հաստության մոմ: Առաջին մոմը հավասարաչափ է վառվում և մինչև վերջ այրվելու համար հարկավոր է 4 ժամ: Երկրորդ մոմը նույնպես հավասարաչափ է վառվում, թեև մինչև վերջ այրվելու համար դրան հարկավոր է 3 ժամ: Երկու մոմերն էլ միաժամանակ հանգցրին: Ո՞ր ժամին հանգցրին մոմերը, եթե հանգցնելուց հետո առաջին մոմի մնացած մասի երկարությունը 2-անգամ գերազանցում էր երկրորդ մոմի մնացած մասի երկարությանը:

Պատասխանը հիմնավորեք:

(3) **29.** Վեցերորդ դասարանցի աշակերտներին առաջարկեցին հետևյալ աշխատանքը.

1) Հաշվարկե՛ք. I. $7{,}21 \cdot 3$ II. $5{,}31 \cdot 4$

III. $11011 : 11$ IV. $3208 : 8$

2) հաշվարկե՛ք. $2\frac{1}{3} \cdot 3\frac{4}{7} + 2\frac{1}{3} \cdot 5\frac{3}{7}$

3) Երեք արկղերից առաջինում 3 կգ-ով պակաս պաքսիմատ էր, քան՝ երկրորդում և 5 կգ-ով պակաս, քան երրորդում, իսկ երեք արկղերում միասին ընդամենը 44 կգ պաքսիմատ էր: Քանի՞ կիլոգրամ պաքսիմատ էր երրորդ արկղում:

4) Առաջին ուղղանկյան երկարությունը 150 սմ է, լայնությունը՝ 18 սմ, իսկ երկրորդ ուղղանկյան երկարությունը 50 սմ է, լայնությունը՝ 36 սմ: Քանի՞ անգամ ավելի է առաջին ուղղանկյան մակերեսը՝ երկրորդ ուղղանկյան մակերեսից:

5) Հյուրանոցում բնակվող 243 զբոսաշրջիկներից յուրաքանչյուրը կարող է խոսել անգլերեն կամ գերմաներեն: Անգլերեն խոսել կարող է 139 զբոսաշրջիկ, իսկ գերմաներեն խոսել՝ 153 զբոսաշրջիկ: Հյուրանոցում բնակվող քանի՞ զբոսաշրջիկ կարող է խոսել ինչպես անգլերեն, այնպես էլ գերմաներեն:

Հաջորդ էջին տրված է աշակերտներից մեկի աշխատանքը.

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

1) I. $7{,}21 \cdot 3 = 21{,}63$ II. $5{,}31 \cdot 4 = 20{,}124$

III. $11011 : 11 = 101$ IV. $3208 : 8 = 401$

2) $2\frac{1}{3} \cdot 3\frac{4}{7} + 2\frac{1}{3} \cdot 5\frac{3}{7} = 2\frac{1}{3} \cdot 9 = 18 + 3 = 21$

3) $44 - 3 - 5 = 36$, $36 : 3 = 12$, երրորդ արկղում՝ $12 + 3 = 15$ (կգ):

4) $150 : 50 = 3$ $36 : 18 = 2$ առաջինի մակերեսը ավելի է $3 \cdot 2 = 6$-անգամ:

5) $243 - 139 = 114$, երկու լեզուներով խոսում է $153 - 114 = 39$ զբոսաշրջիկ:

- Ցույց տվեք աշակերտի կողմից բաց թողած յուրաքանչյուր սխալը և գրեք ուղղված տեսքով:

Ակադեմիական հմտություններ

Ընթերցած տեքստի վերաիմաստավորում

Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:

19-րդ դարում բժիշկները անհատական դեպքեր ուսումնասիրելիս՝ բացահայտեցին, որ որոշ երեխաներ դժվարանում են տառերը ճանաչել: Այդ ֆենոմենը «Բառի կուրություն» անվանեցին: Բրիտանացի բժիշկներից մեկի գրառման մեջ կարդում ենք. «Հայրը եկավ 10 տարեկան տղայի հետ, որպեսզի հասկանար, ինչու տղան ուսման մեջ դժվարություններ ունի: Տղան ակնհայտորեն պայծառ միտք ուներ...Պարզվեց, որ նա դժվարանում է կարդալ և դրա պատճառը ոչ թե տեսողության կրճատումն էր, այլ բառերը հիշելու բնածին դեֆիցիտը՝ պակասը»: Հետագայում այս նույն կարծիքի վրա հենվեց դիսլեքսիայի բացատրությունը՝ դիսլեքսիան զարգացման խախտում է, որը ենթադրում է գրելու և կարդալու բարդություններ և այս բարդությունները չեն բացատրվում մտավոր կարողությունների կամ լսողության, թե տեսողության պակասով: Դիսլեքսիայի պատճառը ծնողների անուշադրությունը չէ, ոչ էլ էկրանի մոտ երկար ժամանակ անցկացնելը: Դա բացատրվում է գլխուղեղի գործունեության պակասով, ինչը առաջ է բերում լսողական, տեսողական տեղեկատվության վերամշակման բարդություններ: Հաճախ՝ դասարանում, որտեղ 20 երեխա է սովորում, մեկ կամ երկու երեխա այնուամենայնիվ նման բարդություններ ունի:

Անցնել հարցերին. 30 31 32 33 34

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

Որոշ դեպքերում դիսլեքսիայի նշանները բացահայտվում են վաղ մանկության ժամանակ: Օրինակ՝ դիսլեքսիա ունեցող երեխաները ուրիշի ասածը հասկանալու խնդիր են ունենում կամ ուշ են սկսում խոսել, ինչպես նաև կարող են դժվարանալ տարածությունում կողմնորոշվելու մեջ, դժվար են հիշում առարկաների անունները և այլն: Հաճախ այս ազդանշանները աննկատելի են մնում, քանի որ այս երեխաները կարծես ոչ մի բանով չեն տարբերվում իրենց հասակակիցներից: Դպրոցում սովորել սկսելու հետ միասին պարզվում է, որ չնայած կատարված փորձերին,այնուամենայնիվ իրենց հասակակիցների նման չեն կարողանում կարդալ:

Ծնողները և ուսուցիչները հուսահատված են, հաճախ են լսվում մեկնաբանություններ. «Ծույլ է», «Կկարողանար, եթե մտքում դներ»... իսկ երեխան անձամբ մտածում է, որ «չի կարող», «բավարար չափով լավ չէ»... Նրա մոտ ձևավորվում է բացասական վերաբերմունք դպրոցի և, ընդհանրապես ուսման նկատմամբ: Բազմաթիվ հետազոտությունները հաստատում են, որ դիսլեքսիա ունեցող երեխաները ուսուցիչների, ծնողների ուշադրության կենտրոնում հայտնվում են ոչ թե կարդալու, այլ վարքի բարդությունների և սովորելու մոտիվացիայի դեֆիցիտի՝ պակասի պատճառով:

Դիսլեքսիան խրոնիկական վիճակ է և տարիքի ավելանալու հետ միասին այն չի վերանում: Թեև, եթե այս երեխաները ստանան ժամանակին և անհատական կարիքներին հարմարեցված օգնություն, կարդալու ունակությունը նույնպես կբարելավվի և հնարավոր է խուսափել այնպիսի երկարատև հետևանքներից, ինչպիսիք են. սեփական անձից դժգոհությունը, անհեռանկար լինելը, ընկերներ ունենալու և հասակակիցների հետ հարաբերությունների բարդությունները:

Անցնել հարցերին. 30 31 32 33 34

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **30.** Ո՞ր կարծիքը՝ որպես փաստարկ հարմար կլինի առաջին պարբերությունում բերված բրիտանացի բժշկի գրառումից:

ա) Դիսլեքսիայի ֆենոմենը հայտնաբերեցին 19-րդ դարում և այն անվանեցին «Բառի կուրություն»,

բ) բժիշկները, որոնք դիսլեքսիայի ֆենոմենի վրա ուշադրություն դարձրին, դեռևս չգիտեին, որ այն բացատրվում է գլխուղեղի ոչ լիակատար գործունեությամբ,

գ) դիսլեքսիայի առաջին հետազոտողները արդեն գիտեին, որ կարդալու ունակության բարդությունը չի կապվում մտավոր դեֆիցիտի հետ,

դ) դիսլեքսիան 19-րդ դարում «Բառի կուրություն» անվանեցին, քանի որ այն ժամանակ այս ֆենոմենը կապում էին տեսողության կրճատման հետ:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **31.** Թվարկածներից ո՞րն է արդարացված:

ա) Անհնար է դիսլեքսիայի հայտնաբերումը մինչև դպրոցական տարիքը, քանի որ դիսլեքսիա ունեցող երեխաները ոչ մի բանով ետ չեն մնում իրենց հասակակիցներից,

բ) դիսլեքսիա ունեցող երեխաները չեն կարողանում հասնել ակադեմիական հաջողությունների, քանի որ նրանք սովորելու ցածր մոտիվացիա ունեն,

գ) դիսլեքսիա ունեցող երեխաների վարքի խնդիրները հեշտությամբ նկատելի են ուսուցիչների համար, ինչը հեշտացնում է դիսլեքսիայի ժամանակին բացահայտումը,

դ) դիսլեքսիա ունեցող երեխաները դպրոց մուտք գործելուն պես հանդիպում են բարդությունների, ինչը նրանց մոտ կասկած է առաջացնում սեփական կարողությունների նկատմամբ:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **32.** Դիսլեքսիա ունեցող երեխաները չեն կարողանում ստանալ համապատասխան և ժամանակին աջակցություն, քանի որ՝

ա) այս երեխաները ոչ բավարար հետաքրքրություն են դրսևորում ուսման նկատմամբ և վարքի խնդիրներ ունեն,
բ) այս երեխաները չեն կարողանում ունենալ ընկերներ և ունեն համադասարանցիների հետ հարաբերությունների բարդություններ,
գ) ծնողները և ուսուցիչները ոչ ճիշտ պատկերացում ունեն նրանց ուսման բարդությունների պատճառների մասին,
դ) ծնողները և ուսուցիչները չունեն անհատական կարիքներին հարմարեցված օգնություն ցուցաբերելու փորձ:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **33.** Ո՞ր հարցին **չենք կարող** պատասխանել տեքստի վրա հենվելով:

ա) Ի՞նչն է դիսլեքսիայի պատճառը:
բ) Մոտավորապես ի՞նչ հաճախականությամբ է դիսլեքսիա հանդիպում երեխաների շրջանում:
գ) Կոնկրետորեն ի՞նչ մեթոդներով կօգնենք դիսլեքսիա ունեցող երեխային:
դ) Հնարավո՞ր է դիսլեքսիային բնորոշ կարդալու խնդիրները լրիվությամբ վերացնել:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **34.** Դիսլեքսիայի ժամանակին բացահայտումը և համապատասխան օգնությունը կարևոր է.

ա) երեխային՝ կարդալու խնդրից խուսափելու և համապատասխանաբար, ծուլությունը կանխարգելելու համար,
բ) երեխայի կարողությունների մասին ծնողի և ուսուցիչների մոտ համարժեք տեսակետներ ձևավորելու համար,
գ) երեխայի ապագա զարգացման մասին ծնողների և ուսուցիչների հուսահատությունից խուսափելու համար,
դ) երեխայի կարդալու խնդիրը թեթևացնելու և ուղեկցող վարքից, հուզական բարդություններից խուսափելու համար:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(9) **35. Վերլուծական էսսե**

Ծանոթացե՛ք երկխոսություններին.

Մայրը վեցերորդ դասարանցի որդուն տարավ բժշկի մոտ.

Բժիշկ. Հապա, հիմա հարմար նստիր և ասա, թե ի՞նչ է քեզ անհանգստացնում ...

Երեխա. Ես...

Մայրը. Մենք առավոտյան վայր ընկանք և ոտքը ցավեցրինք:

Բժիշկ. Հապա, ցո՛ւյց տուր, որտե՞ղ է ցավում:

Մայրը. Այ, ճիշտ ծնկի մոտ, արդեն այտուցվել է նաև:

Ուսուցիչը դպրոցի միջանցքում հանդիպում է տասներկուերորդ դասարանցի աշակերտի ծնողի.

Ուսուցիչ. Ինչպե՞ս եք, Իրակլին ի՞նչ է մտադիր անելու, ո՞ւ ր եք հանձնում:

Ծնող. Բժշկական ենք հանձնելու և շատ ենք անհանգստանում:

Ուսուցիչ. Չեմ կասկածում, որ հաջողությամբ կհանձնեք քննությունները...

Քաղվածք մի կայք էջից.

«...Զավակների լավ ապագայի ապահովման, թե նրանց զարգացման պատճառաբանությամբ (մոտիվով) երբեմն ծնողները գերադասում են պատասխանատվությունը իրենք վերցնեն իրենց վրա: Իսկ զավակները մարտահրավերների առջև մնում են անպաշտպան (անզեն)»:

Վերաիմաստավորե՛ք, ըմբռնե՛ք բերված նմուշները և դատողություն արե՛ք.

- Ի՞նչ խնդիր է բացահայտվում տրված պատկերազարդված նյութում:
- Ի՞նչ հիմնախնդրի առջև է կանգնում հասարակությունը այս պաստճառով:
- Ինչպե՞ս կարելի է լուծել այս հիմնախնդիրը: Ընդհանրացրե՛ք ասելիքը:

Դատողությունը ամրապնդելու նպատակով բերեք փաստարկներ և համապատասխան օրինակներ: Փոխադրությունը պետք է պարունակի առնվազն 120 բառ:.

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35